ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը

Գևորգ Լոռեցյան

Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները

Դալլաս, ԱՄՆ, 24-28.04.2019թ.

Հրավիրող կողմը

Թոնի Քին, EarthX կոնֆերանսի գործադիր տնօրեն

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման շրջանակներում նախատեսված էին հանդիպումներ միջազգային խոշոր ընկերությունների հետ, որոնք գործունեություն են ծավալում սպորտի բնագավառում, ինչպես նաև հանդիպումներ հնարավոր ներդրողների հետ:

Քննարկված թեմաները

Քննարկվել է Հայաստանում նոր, եվրոպական ամենաբարձր չափանիշներին համապատասխանող 35-40 հազար հանդիսականի համար նախատեսված ֆուտբոլի մարզադաշտի կառուցման հարցը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպումներ են տեղի ունեցել վենչուրային կապիտալիստների հետ, քննարկվել է Հայաստանում մարզադաշտի կառուցման ներդրումային ծրագիրը: Մեծապես հետաքրքրված լինելով նախագծով՝ ներդրողների հետ միասին այցելել ենք հեղինակավոր «HKS Sports and Entertainment» ընկերության հիմնադիրների ու ղեկավարների հետ, որոնք մասնագիտացած են մարզադաշտերի կառուցման գործում ու արդեն իսկ կառուցել են 150-ից ավելի մարզադաշտ ամբողջ աշխարհում: Վերջիններիս հետ քննարկվել է նախագծի տեխնիկական կողմը:

Հանդիպում է տեղի ունեցել ԱՄՆ կոնգրեսմեն Մարկ Վիսիի հետ, քննարկվել է արևային էներգիայի օգտագործման նորագույն տեխնոլոգիաների կիրառման հնարավորության հարցը ստրատեգիական նշանակության կառույցների կառուցման ժամանակ, այդ թվում՝ նոր մարզադաշտի տանիքի՝ արևային պանելներով սարքավորելու նպատակահարմարությունը:

Հանդիպում է տեղի ունեցել Ուկրաինայի Խերսոնի մարզպետի ժամանակավոր պաշտոնակատար Դմիտրի Բուտրիի հետ: Քննարկվել է երկկողմ համագործակցության

հնարավորություններն ու համատեղ մարզական միջոցառումներ կազմակերպելու հնարավորությունը:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Պայմանավորվածություն է ձեռք բերվել կատարել հետազոտություն՝ պարզելու համար, թե հնարավոր ինչ տեղանք կարող է հատկացվել մարզադաշտի նախագծի իրականացման համար: Քննարկվել է 250-300 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրման հնարավորությունը տվյալ նախագծի իրագործման համար: Նախատեսվում է մարզադաշտի մեջ ունենալ հյուրանոցային, ռեստորանային, առևտրային ու վարչական հատվածներ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել կարճ ժամանակում հստակեցնել նախագծի իրագործման ժամկետներն ու ընթացակարգը:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Նախատեսվում է մեկ ամսվա ընթացքում գալ ընդհանուր հայտարարի նախագծման ու լոկալ մաստերպլանի կազմման ժամանակացույցի ու այդ աշխատանքների ֆինանսավորման հարցերում:

Ստորագրությունը, ամսաթիվը

, 02.05.2019թ